ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ (ԴԱՍՎԱՐ)

ԹԵՍՏ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:

Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Տրված տարբերակներից ո՞րը գրաճանաչության նախաայբբենական շրջանում լուծվող խնդիր չէ: (1 միավոր)**

1) Հնչյունային լսողության զարգացումը
2) հնչյուն-տառերի ճիշտ համադրումը
3) Տեսողական և տարածական ընկալումների զարգացումը
4) Հոգեկան գործընթացների և զգայարանների զարգացումը

2 **Հնչյունային վերլուծական համադրական մեթոդով սովորողներին գրաճանաչ դարձնելու քայլաշարերից ո՞րն է ճիշտ: (1 միավոր)**

1) հնչյուն(տառ)-վանկ-բառ-նախադասություն-պատմություն
2) պատմություն-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն(տառ)-վանկ-բառ-նախադասություն-պատմություն
3) հնչյուն(տառ)-վանկ-բառ-նախադասություն-պատմություն-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն(տառ)
4) պատմություն-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն(տառ)

3 **Նշվածներից ո՞րը տարրական դպրոցում բառիմաստը բացատրելու եղանակ չէ: (1 միավոր)**

1) բառակազմական վերլուծություն կատարելու միջոցով
2) հոմանիշների և հականիշների միջոցով
3) քերականական կանոնի միջոցով
4) իրական առարկան ցուցադրելու միջոցով

4 **Տրված տարբերակներից ո՞րը ուղղագրության ուսուցման մեթոդ չէ: (1 միավոր):**

1) կանոնարկմանը
2) համադրականը
3) հնչյունայինը
4) ընդօրինակմանը

5 **Տարրական դպրոցում տրված խոսքի մասերի ուսումնասիրման ո՞ր հաջորդականությունն է ճիշտ: (1 միավոր)**

1) գոյական, բայ, ածական, թվական
2) գոյական, բայ, թվական, ածական
3) թվական, բայ, ածական, գոյական
4) գոյական, ածական, թվական, բայ

6 **Մայրենիի դասերի ընթացքում կարդացածը մանրամասն վերարտադրելու մեթոդական 4 քայլաշարից ո՞րն է ճիշտ: (1 միավոր)** *1.որոշել բնագրի հենակետային մտքերը, 2.որոշել բնագրի բանալի բառերը, 3.արտահայտիչ կարդալ և որոշել հիմնական միտքը, 4.բնագիրը բաժանել տրամաբանական ամբողջություն կազմող մասերի՝ վերնագրելով դրանք (պլանի կետեր)*

1) 3, 2, 1, 4
2) 2, 4, 1, 3
3) 2, 3, 1, 4
4) 1, 3, 2, 4

7 **Տրված տարբերակներից ո՞րը պատմելու տեսակ չէ:** (1 միավոր)

1) դատողություններովը
2) ընտրովին
3) գեղարվեստորենը
4) շարունակելովը

8 **Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա: (1 միավոր)**

1) սիրտ տալ - ոգևորել, թևավորել, մխիթարել
2) տրոյական ձի - ակնհայտ վտանգ
3) հոմերական քրքիջ - շատ բարձր, անզուսպ ծիծաղ
4) աչքին թոզ փչել - ապակողմնորոշել, խորամանկությամբ խաբել

9 **Տրված պնդումներից ո՞րն է սխալ: (1 միավոր)**

1) Գրաճանաչության շրջանում աշակերտի համար ավելի հեշտ է տպագիր նյութից արտագրությունը, քան ձեռագիր:
2) *Ե* տառի ուսուցումը պետք է իրականացվի տառից դեպի հնչյունը գնացող հաջորդականությամբ:
3) Տարրական դպրոցում քերականության ուսուցման գործընթացում տեսական գիտելիքների ձեռքբերման հատուկ նպատակ չի դրվում:
4) Գրելու կարողության ձևավորման ուղղությամբ աշխատանքներն սկսվում են նախապայբբենական շրջանում:

10 **Թվարկվածներից 2-ը կարդալու տեսակներ *չեն*: Նշել դրանց համարները: (2 միավոր)**

1. դերերով
2. արտահայտիչ
3. շարունակելով
4. բարձրաձայն
5. անսխալ
6. մտքում
7. ընտրովի

11 **Տրված պնդումներից 2-ը սխալ են: Նշել դրանց համարները: (2 միավոր)**

1. Հեքիաթի ուսումնասիրման ընթացքում երևակայական կողմը չպետք է բացահայտել:
2. Քերականական նյութի ուսումնասիրման գործընթացը կազմակերպվում է պարուրաձև սկզբունքով:
3. Նյութի ամփոփումը կարող է իրականացվել ինչպես մեկ դասի որոշակի փուլում, այնպես էլ դասի ավարտին:
4. Տառի գրուսուցումը պետք է սկսել նրա հնչյունի գիտակցումից:
5. Նախապատրաստական զրույցի ընթացքում չպետք է պատմվի ընթերցվելիք ստեղծագործության բովանդակությունը:
6. Կարդալու հմտությունը ձևավորվում է 3 փուլով՝ վերլուծական, համադրական, իմաստավորման:
7. Հայերենի փոքրատառերն ունեն 4, իսկ մեծատառերը՝ 3 տեղադրություն:

12 **Տարբերակներից 2-ում բաղադրյալ հատուկ անվան գրության սխալ կա: Նշել դրանց համարները: (2 միավոր)**

1. Գեղամա լեռներ, Կիլիկիայի հայկական պետություն, Միավորված ազգերի կազմակերպություն
2. Դավիթ Անհաղթ, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Մերձավոր արևելք
3. Ջենով Օհան, Սուրբ Նշան եկեղեցի, <<Հողի արյուն>> գինի
4. Արա Գեղեցիկ, Խաղաղության համաշխարհային խորհուրդ, Ձախորդ Փանոս
5. Հայաստանի Հանրապետության ազգային ժողով, <<Ձինվորի մայր>> կազմակերպություն, Անկախության օր
6. Անանիա Շիրակացի, Հռոմեական կայսրություն, Հայաստանի առաջին հանրապետություն

13 **Տրված պնդումներից 2–ում սխալ կա: Նշել դրանց համարները: (2 միավոր)**

1. ***Յ*** ձայնակապը առավել հստակ արտասանվում և գրվում է ***ա*** և ***ո*** ձայնավորներից հետո:
2. Ածանցները և վերջավորությունները փոխում են բառի իմաստը:
3. Հայերենի հնչույթները երեսունվեցն են, հնչյունները կարող են լինել անսահմանափակ:
4. Բոլոր միավանկ բառերի հոգնակին կազմվում է ***եր*** վերջավորությամբ:
5. Ոչ բոլոր բազմավանկ բառերի հոգնակին է կազմվում ***ներ*** վերջավորությամբ:
6. Մայրենիի տարրական դասընթացի ուսումնասիրությունն իրականացվում է 2 փուլով՝ լեզվական նախագիտելիքների ուսումնասիրում և լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրում:
7. Ընտրովի ընթերցանությունը պիտի նախորդի դերերով ընթերցանությանը:

14 **Տրված պնդումներից երկուսը սխալ են: Նշել դրանց համարները: (2 միավոր)**

1. Ուղղագրությունը ճիշտ գրելու և արտասանելու կանոնների ամբողջությունն է:
2. Բառամիջում ***է*** գրվում է միայն այն դեպքերում, եթե այն առանձին արմատ է կամ արմատի սկզբնատառ:
3. Բաղաձայնով վերջացող վանկը կոչվում է փակ վանկ:
4. Կոչականի վրա միշտ շեշտ է դրվում, եթե անգամ նախադաս և հետադաս լրացում ունի:
5. Ստորոգյալները լինում են երկու տեսակ՝ պարզ և բաղադրյալ:
6. ***Մարդ*** գոյականի հոգնակին այլաձև է:
7. ***Ոչ ոք*** դերանունը չի կարող ստանալ ***ու*** հոլովիչ:

15 **Տրված տարբերակներից 2–ի բոլոր բառերի հոգնակին կազմվում է *ներ* վերջավորությամբ: Նշել դրանց համարները: (2 միավոր)**

1. հանքահոր, սրբիչ, գառ
2. ձեռագիր, դաշտամուկ, շրջան
3. բեռ, մեծատուն, քաղաքագետ
4. աստղ, թռչուն, վարագույր
5. վագր, ծոռ, ժամացույց
6. հանքափոր, վիպագիր, մատ
7. շնաձուկ, մեծատառ, բեռնակիր

16 **Տրված շարքերից 3-ի բոլոր բառերը բացառական հոլովով դրված գոյականներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. պատմությունից, հեռվից, հորից
2. դրկից, կեսօրից, վերևից
3. գեղուհուց, դեղնուց, քրոջից
4. քաղաքից, այգուց, հարգալից
5. ցանցից, հայելուց, ճեմուղուց
6. տիկնոջից, փոշուց, հատակից
7. ցանցից, նախամարդուց, վաղուց
8. կտուց, սիրուց, ցանցից

17 **Տրված նախադասություններից 3-ում կետադրական սխալ կա: Նշել դրանց համարները: (3միավոր)**

1. Ես տեսնում եմ՝ չես հավատում ո՛չ իմ, ո՛չ քո անցյալին:
2. Հաջորդ օրը՝ առավոտ վաղ Ներսեսը գնաց մոտակա անտառը՝ որսի:
3. Մի ճերմակ ամպ՝ թափանցիկ ու տձև հանդարտ լողում էր լազուրի մեջ:
4. Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք էր թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան:
5. Ծառի տերևները կարմրել էին, և այն մի հսկայական բոց էր թվում, վառված ժայռի կատարին:
6. Բոլորից բարձր երևում էր Մասիսի՝ հավիտենական ձյունով ծածկված սպիտակափառ կատարը:
7. Վանականները սիրալիր ընդունելություն ցույց տվին, և այդ օրվանից Բայրոնի առաջ հետաքրքիր մի աշխարհ բացվեց՝ խորախորհուրդ, գաղտնաթաքույց:

18 **Տրված բառաշարքերից 3-ում ուղղագրական սխալով բառ կա: Նշել դրանց համարները: (3միավոր)**

1. երկկենցաղ, ոսկևազ, աջակողմյան
2. օրիորդ, հոգեվարք, անոթ
3. իննսուն, լայներիզ, անձեռոցիկ
4. մեղմօրոր, Վորոնեժ, ճեպնթաց
5. Սուքիաս, Եղիա, Վիեննա
6. օթոց, մթնկա, օրըստօրե
7. ընդդեմ, շիմպանզե, Եվրոպա
8. անբարիշտ, բնօրրան, ճողփյուն

19 **Տրված պնդումներից 3–ում սխալ կա: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Ասացվածքն այլաբանական իմաստ *չունի:*
2. Առակը կարող է ունենալ պատմողական, տրամաբանական և բարոյախրատական մասեր:
3. Տեղեկատվականը, ներգործողը, համոզողը, էվրիստիկը զրույցի տարատեսակներ են՝ ըստ նպատակի:
4. Նախապատրաստական վարժությունները կիրառվում են լեզվական նյութի ուսումնասիրման ԽԻԿ համակարգի իմաստավորման փուլում:
5. Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններին երեխաները ծանոթանում են առաջին դասարանից՝ գրաճանաչության շրջանից:
6. Արտագրությունները լինում են 2 տեսակի՝ ընդօրինակման և ստեղծագործական:
7. Ի տարբերություն շարադրության՝ փոխադրությունը կապակցված գրավոր խոսքի զարգացման միջոց *չէ:*

20 **Տրված բառախմբերից 3-ում բոլոր բառերը միմյանց հոմանիշ են: Նշել այդ խմբերի համարները: (3 միավոր)**

1. մտածել, դատել, խորհել, կշռադատել
2. ակնկոր, սևեռուն, անքթիթ, ուշադիր
3. աժդահա, վիթխարի, հսկա, խոշոր
4. ագահ, ընչաքաղց, անհագ, ընչասեր
5. դրացի, հարևան, կողակից, բնակակից
6. հրապուրիչ, դյութիչ, հուզիչ, հմայիչ
7. խառնվել, ձուլվել, միանալ, անէանալ
8. ինքնահավան, փառասեր, մեծամիտ, ըմբոստ
9. անիմաստ, անմիտ, անկաշկանդ, անհեթեթ

Մաթեմատիկա

Ընտրովի պատասխաններով առաջադրանքներ

21 **Տրված թվերից ո՞րն է բաղկացած երկրորդ դասի հինգ միավորից: (1 միավոր)**

1) 5000
2) 50
3) 50000
4) 505000

22 **Քանի՞ հարյուրյակ և քանի՞ հազարյակ է պարունակում տրված թիվը՝ 20024: (1 միավոր)**

1) 200 հարյուրյակ և 20 հազարյակ:
2) 20 հարյուրյակ և 2 հազարյակ:
3) 0 հազարյակ և 0 հարյուրյակ:
4) 200 հարյուրյակ և 0 հազարյակ:

23 **Թվի քառապատիկը 600 է: Ինչի՞ է հավասար այդ թվի 1/5 մասը: (1 միավոր)**

1) 3000
2) 30
3) 120
4) 480

24 **Ո՞ր շարքի բոլոր հասկացություններն են մեծության չափման միավոր: *(1 միավոր)***

1) զանգված, երկարություն, ժամ
2) հեկտար, լիտր, կիլոմետր-ժամ
3) վայրկյան, գրամ, ժամանակ
4) կիլոգրամ, քառակուսի-սանտիմետր, տարողություն

25 **Երեք հաջորդական կենտ թվերի գումարը 177 է: Ո՞ր թվանշանով կարող է վերջանալ այդ թվերից ամենամեծը: *(1 միավոր)***

1) 3
2) 7
3) 9
4) 1

26 **Նշել 50 – 36 = 50 – (30 + 6) = (50 - 30) + 6 = 26 առաջադրանքի կատարման ժամանակ հանման հաշվողական հնարը կիրառելիս թույլ տրված սխալի տեսական դրույթը:** ***(1 միավոր)***

1) հաշվողական հնարի մեջ գործողության բացթողում կամ լրացուցիչ գործողության ներառում,
2) թվից գումար հանելու հաշվեկանոնի ոչ ճիշտ կիրառում
3) համապատասխան կարգային գումարելիների հետ ոչ ճիշտ գործողությունների կատարում:
4) աղյուսակային գումարման և հանման սխալ,

27 **Ո՞ր տեսական դրույթն է ընկած հետևյալ առաջադրանքի կատարման հիմքում «Ընտրի՛ր այնպիսի թվեր, որ 45-10<45-..., 18+40>18+.... անհավասարությունները լինեն ճշմարիտ»: (1 միավոր)**

1) Թվաբանական գործողությունների բաղադրիչների փոփոխություններից արդյունքի փոփոխություն
2) Թվաբանական գործողությունների հատկություններ
3) Թվաբանական գործողության իմաստ
4) Թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքի միջև կապ

Կարճ պատասխաններով առաջադրանքներ

28 **Թվարկված տեսական գիտելիքներից երկուսը ընկած են ոչ կլոր տասնյակ համարվող երկնիշ թիվը միանիշ թվով բազմապատկելու հաշվեկանոնի հիմքում: Նշել դրանց համարները: (2 միավոր)**

1) Թիվը գումարով բազմապատկելու հաշվեկանոն:
2) Կարգային գումարելիների բազմապատկում թվով:
3) Գումարման տեղափոխական հատկություն:
4) Գումարման զուգորդական հատկություն:
5) Արտադրիչներից մեկի ներկայացում հարմար գումարելիների գումարի տեսքով:
6) Երկնիշ թվի ներկայացում կարգային գումարելիների գումարի տեսքով:

29 **Թվարկված տեսական գիտելիքներից երկուսը ընկած են «7:15, 18:35, 134:234» տեսքի օրինակների լուծման հիմքում: Նշել դրանց համարները: (2 միավոր)**

1) Թվերի կարգային և տասնորդական կազմություն
2) Մեծ թվի ներկայացումը կարգային գումարելիների գումարի տեսքով
3) Գումարի բաժանումը թվի հաշվեկանոն
4) մնացորդով բաժանում կատարելիս բաղադրիչների և արդյունքի միջև կապը
5) Աղյուսակային բազմապատկում
6) Բազմապատկման հատուկ դեպքեր.

30 **Աննան որոշեց իր 28 դասընկերներին կոնֆետ հյուրասիրել: Եթե տղաներից յուրաքանչյուրին տա 5 կոնֆետ, իսկ աղջիկներից յուրաքանչյուրին՝ 3, ապա ընդամենը կպահանջվի 108 կոնֆետ: (2 միավոր)**

1) Քանի՞ տղա է սովորում այդ դասարանում:
2) Քանի՞ աղջիկ է սովորում այդ դասարանում:

31 **Մրցույթի ընթացքում աշակերտները պետք է լուծեին 20 առաջադրանք: Յուրաքանչյուր ճիշտ լուծված առաջադրանքի համար տրվում է 5 միավոր, իսկ չլուծվածի կամ սխալ լուծվածի համար հանվում է 3 միավոր: Աշակերտներից մեկը հավաքել է 68 միավոր: (2 միավոր)**

1) Քանի՞ առաջադրանք պետք է ճիշտ լուծեր աշակերտը, որպեսզի հավաքեր 76 միավոր:
2) Քանի՞ առաջադրանք է ճիշտ լուծել աշակերտը:

32 **Թվարկված պահանջներից ո՞ր 2-ն են համապատասխանում հետևյալ խնդրի պայմանին «15 դմ երկարության լարից կտրեցին սկզբում 2դմ, իսկ հետո 4 դմ լար»: Նշել դրանց համարները: (2 միավոր)**

1) Քանի՞ դեցիմետրով քիչ լար մնաց:
2) Քանի՞ դեցիմետր լար մնաց:
3) Քանի՞ դեցիմետրով ավելի լար մնաց, քան կտրել էին:
4) Քանի՞ անգամ լարը փոքրացավ:
5) Քանի՞ դեցիմետրով ավելի լար կտրեցին սկզբում, քան հետո են կտրել:

33 **520 կմ հեռավորության վրա գտնվող A և B վայրերից իրար ընդառաջ միաժամանակ դուրս եկան երկու ավտոմեքենա: A վայրից դուրս եկած ավտոմեքենան, որը շարժվում էր 60կմ/ժ արագությամբ, 4 ժամ հետո հանդիպեց B վայրից դուրս եկած ավտոմեքենային: Հաշվել. (3 միավոր)**

1) ավտոմեքենաների միջև եղած հեռավորությունը հանդիպումից 1 ժամ առաջ:
2) հանդիպումից 1 ժ հետո B վայրից դուրս եկած ավտոմեքենայի հեռավորությունը A վայրից:
3) ավտոմեքենաների միջև եղած հեռավորությունը հանդիպումից 1 ժամ հետո:

34 **Տեսական ո՞ր դրույթներն են ընկած 53:6 տեսքի օրինակի լուծման հիմքում: Նշել 3 ճիշտ պատասխան: (3 միավոր)**

1) Թվաբանական գործողության հատկություն
2) Մնացորդով բաժանման պայման
3) Հանման գործողության բաղադրիչների և արդյունքի միջև կապ
4) Բաժանման աղյուսակային դեպքեր
5) Հանման գործողության իմաստի ընկալում.
6) Մնացորդով բաժանման կանոն

35 **Գրքի էջերը համարակալելու համար տպագրվել է 511 թվանշան: Էջերի համարների տպագրումը սկսվում է 3-րդ էջից, իսկ վերջին էջի համարը չի տպագրված: (3 միավոր)**

1) Քանի երկնիշ թիվ է պահանջվում գրքի համարակալման համար:
2) Քանի՞ էջ ունի գիրքը:
3) Քանի՞ 6 թվանշան է տպագրված, եթե 65-րդ էջը պոկված է:

36 **Դասարանի 12 աշակերտ հաճախում է մաթեմատիկայի խմբակ, 17-ը՝ անգլերենի խմբակ, 10-ը՝ ֆիզիկայի խմբակ: 8 աշակերտ հաճախում է և՛ մաթեմատիկայի, և՛ անգլերենի խմբակ: 3 աշակերտ հաճախում է և՛ անգլերենի, և՛ ֆիզիկայի խմբակ: 4 աշակերտ հաճախում է և՛ մաթեմատիկայի, և՛ ֆիզիկայի խմբակ: Իսկ և՛ մաթեմատիկայի, և՛ անգլերեն, և՛ ֆիզիկայի խմբակ է հաճախում 2 աշակերտ: (4 միավոր)**

1) Քանի՞ աշակերտ է, որ հաճախում է մաթեմատիկայի խմբակ, բայց չի հաճախում անգլերենի խմբակ:
2) Քանի՞ աշակերտ է, որ հաճախում է ֆիզիկայի խմբակ, բայց չի հաճախում մաթեմատիկայի խմբակ:
3) Քանի՞ աշակերտ է հաճախում միայն երկու խմբակ:
4) Քանի՞ աշակերտ է հաճախում առնվազն երկու խմբակ:

Ես և շրջակա աշխարհը

37 **Երկրագնդի ամենամեծ օվկիանոսն է՝**

1) Հյուսիսային սառուցյալ
2) Ատլանտյան
3) Հնդկական
4) Խաղաղ

38 **Ո՞ր շարքում է նշված միայն վառելանյութ**

1) Ալմաստ, գազ, զմրուխտ, նավթ
2) Նավթ, քարածուխ, գազ, տորֆ
3) Քարածուխ, օպալ, տորֆ, կրաքար
4) Կավիճ, կրաքար, նավթ, քարածուխ

39 **Նշված հատկություններից որն է սխալ օդի համար**

1) Երկնագույն
2) Անհոտ և անհամ
3) Անգույն
4) Թափանցիկ

40 **Համապատասխանեցնել**

ա) Չինաստան	1) Հյուսիսային Ամերիկա
բ) Եգիպտոս	2) Աֆրիկա
գ) Մեքսիկա	3) Հարավային Ամերիկա
	4) Եվրասիա